ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 մայիսի 2026 թվականի N 1044

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔՈՒՄ «ՀԱՅԱՍՏԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՎԱՔ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԻՐԱԶԵԿՈՒՄՆ Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հայաստան» կուսակցությունների դաշինքի ներկայացուցչի իրազեկումը, ղեկավարվելով «Հավաքների ազատության մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածով, 21-րդ և 22-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 3-րդ մասով՝ ***որոշում եմ.***

1.«Հայաստան» կուսակցությունների դաշինքի կողմից 2026 թվականի մայիսի 29-ին, ժամը 18:00-ից մինչև ժամը 20:00-ն Վանաձոր համայնքի Միեր Մկրտչյան փող. 4 հասցեում գտնվող «Արցախ պուրակ»-ի հարակից տարածքում հանրային հավաքի անցկացման վերաբերյալ իրազեկումն ընդունել ի գիտություն:

2.Իրազեկումն ի գիտություն ընդունելու մասին համայնքի ղեկավարի որոշման մասին անհապաղ տեղեկացնել կազմակերպիչներին և ոստիկանությանը, ինչպես նաև համապատասխան որոշումը փակցնել համայնքապետարանի վարչական շենքում՝ բոլորի համար մատչելի և տեսանելի տեղում: Որոշումը տեղադրել նաև vanadzor.am համացանցային կայքէջում:

3.Որոշումն ուժի մեջ է մտնում համայնքապետարանի վարչական շենքում այն փակցվելու պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ԱՐԿԱԴԻ ՓԵԼԵՇՅԱՆ

Ճիշտ է՝
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Հ.ՎԻՐԱԲՅԱՆ